«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու գործընթացում
ԱՌԱՐԿԱ	Մայրենի
ՀԵՂԻՆԱԿ	Գյուլիզար Խուդոյան
ՄԱՐԶ	Արագածոտնի մարզ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Ճարճակիսի միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
Գլուխ 1.....6
1.1Կրտսեր դպրոցականների ուսուցման առանձնահատկությունները.....6
1.2 Ընթերցանության դասի մոդելը.....8
Գլուխ 2.....11
2.1Տարրական դպրոցի ուսուցչին ներկայացվող պահանջները.....11
2. 2 Տարրական կրթության մանկավարժության նպատակը, խնդիրները.....13
ԵԶՐԱԿՈՒԹՅՈՒՆ.....16
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Եթե մանուկը չի հասկանար Ձեր դասավանդությունը, հանցանքը Ձերն է, որովհետև չեք կրցած հասկանալ անոր հոգին, պետք է, որ իջնել մինչև անոր հոգեկան աստիճանը և զայն առնելով, Ձեզի հետ բարձրացնել»:

Կոմիտաս

Թեմայի արդիականությունը. Այսօր առավել քան երբևէ հայ դպրոցի առաջ խնդիր է դրված դաստիարակել հայեցի ոգով կրթված, հայրենասեր, բայց միևնույն ժամանակ միջազգային չափանիշներին համապատասխանող մրցունակ ու արդիական գիտելիքներով օժտված սերունդ:

Արդի ժամանակաշրջանում, երբ կյանքն օրեցօր առաջընթաց է ապրում, դպրոցի կարևորագույն խնդիրներից են դառնում աշակերտների ճանաչողական հետաքրքրությունների, քննադատական մտածողության, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը: Կյանքի ապրելաձևը, պրակտիկան ցույց է տալիս, որ հասարակությանը կարող է պիտանի լինել այն մարդը, որը կարող է ինքնուրույնաբար մտածել, ունակ է ձեռք բերած գիտելիքները բազմազան գործունեության մեջ նպատակաուղղված կիրառել:

Այսօր տրամաբանական մտածողության զարգացումը կարդալու և գրելու գործընթացում ընկալվում է ուսուցման որոշակի նպատակ:

Ուստի մեր թեմայի արդիականությունը պայմանավորված է այսօրվա բարեփոխումների և տեխնոլոգիական առաջընթացի պայմաններում կրտսեր դպրոցականի անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման առանձնահատկությունները ներկայացնելով:

Մեր հետազոտակա աշխատանքի թեման ուղղված է վերոհիշյալ հարցերի ուսումնասիրմանը և վերլուծությանը: Դրանով է պայմանավորված թեմայի արդիականությունը և կարևորությունը:

Ուսումնասիրման օբյեկտը հանրակրթական դպրոցն է, իսկ ուսումնասիրության առարկան հանրակրթական դպրոցում քննադական մտածողության զարգացումը կարդալու և գրելու գործընթացում:

Հետազոտական աշխատանքը նվիրված է վերոհիշյալ հարցերի ուսումնասիրման վերլուծությանը:

Աշխատանքի նպատակն է բացահայտել երեխայի քննադատական մտածողության զարգացումը՝ մասնավորապես դասերի ժամանակ կարդալու և գրելու ընթացքում ստեղծել այնպիսի մթնոլորտ, որ կբացահայտի սովորողների անհատական հնարավորությունները, կնպաստի նրանց հոգևոր ներուժի քննադատական մտածողության զարգացմանը:

Նպատակից բխող խնդիրներ են.

- ✓ Ուսումնասիրել սովորողի հոգեբանական զարգացման բնութագիրը: Վեց տարեկան երեխաների ուսուցման առանձնահատկությունները.
- ✓ Քննարկել կրտսեր դպրոցականի կրթությանը ներկայացվող պահանջները.
- ✓ Բացահայտել երեխայի ընդհանուր կուլտուրան և մտահորիզոնը գիտելիքներն ինքնուրույն ձեռք բերելու և կիրառելու կարողությունը.
- ✓ Փոփոխվող կենսական իրավիճակներում ճիշտ կողմնորոշվել, քննարկել այն մեթոդներն ու հնարները, որոնց ընտրությունը կապահովի քննադատական մտածողության զարգացմանը:
- ✓ Կարդալու և գրելու գործընթացում քննադատական մտածողության զարգացման կարևոր պայմանը՝ պահպանել կրտսեր դպրոցականների զարմանքի և հետաքրքրասիրության բնածին հատկությունը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 2 գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, գծապատկերից և նկարներից:

Աշխատանքի առաջին գլուխը վերնագրված է «Կրտսեր դպրոցականների ուսուցման առանձնահատկությունները»

- խոսքի հնչյունային կուլտուրայի մշակումը և. խոսքի զարգացման խնդիրները:

- Գրուսուցման նախապատրաստելու աշխատանքները:

Երկրորդ գլուխը «Կրտսեր դպրոցականի քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու գործընթացում» վերաբերվում է ուսումնասիրվող հիմնախնդրի և պրակտիկայի արդյունքների վերլուծությանը:

Քննարկել ենք կրտսեր դպրոցականների ինքնուրույն աշխատանքների կազմակերպման մի քանի ձևեր, որոնք ունեն համընդհանուր ուսուցողական նշանակություն, որովհետև գիտելիքների գիտակցական յուրացումը պահանջում է սովորողների ակտիվությունը, ինքնուրույնությունը և նպաստում է տրամաբանական մտածողության զարգացմանը:

Աշխատանքն ավարտվում է եզրակացությունով, օգտագործված գրականության ցանկով:

Գլուխ 1

1.1Կրտսեր դպրոցականների ուսուցման առանձնահատկությունները

Ուսուցման տեսության զարգացումը հրամայական անհրաժեշտություն դարձրեց ուսումնական աշխատանքի գիտական կազմակերպման պահանջը: Այժմ ուսուցման պրոցեսը բնութագրվում է որպես տարաբնույթ աշխատանքների մի ամբողջ համակարգ, որի հիմնական բաղադրիչներն են՝

ա/ ուսուցչի աշխատանքը՝ գիտելիքների հաղորդում կամ գիտելիքների ձեռքբերման ու կարողությունների ձևավորման գործողության ղեկավարումը,

բ/ աշակերտների ուսումնառությունը՝ առաջադրված գիտելիքներն ընկալելու, յուրացնելու կամ ինքնուրույն կերպով գիտելիքներ ձեռք բերելու գործողությունը,

գ/ ուսումնական նյութը, որից բխում կամ ըստ որի որոշվում են նրա մատուցման, ամրապնդման ու կարողությունների վերածման մեթոդական ձևերն ու հնարները,

դ/ ուսուցման մեթոդը, որով պայմանավորված է ուսումնական աշխատանքի կազմակերպումն ու արդունավետությունը:

Իսկ դա նշանակում է, որ աշակերտները պետք է տիրապետեն ոչ միայն տարրական ուսումնական գործունեության որոշակի կարողությունների ու հմտությունների (կարդալ, գրել, խոսել, լսել), այլև մտածական գործառնությունների (վերլուծություն, ընդհանրացում, վերացարկում, որոշիակացում և այլն):

Տարրական դասարաններում մայրենի լեզուն ոչ միայն ուսումնական հիմնական առարկաներից մեկն է, այլև ուսուցման լեզու՝ գիտելիքների հաղորդման, դատիարակչական աշխատանքների կազմակերպման և կարողությունների ու հմտությունների ձևավորման լեզու: Մայրենի լեզվի դասակարգման ընթացքում մեծ տեղ են զբաղեցնում զրույցները: Նկատելի են դեպքեր, երբ մայրենի լեզվի ժամերին զրույցը, բնագիրը մասերի բաժանելը, բովանդակության սոսկ վերարտադրության աշխատանքները գերակշռում են բուն ընթերցանության գործընթացի և բնագրի շուրջ տրվող վերլուծական, բնութագրական աշխատանքներն անտեսվում են: Այլ կերպ ասած՝ նման դասերը չեն ապահովում երեխայի մտավոր և բազմակողմանի զարգացումը:

Ընթերցանության ուսուցումը դիտվում է իբրև անձի դաստիարակության և զարգացման հիմնական միջոց: Հետևաբար, այն պետք է ապահովի կայուն գիտելիքներ, կարողություններ և հմտություններ

«Ընթերցանություն» բառը միանշանակ չէ: Այն ենթադրում է մտավոր, ճանաչողական և խոսքային գործունեություն: Դերջինս, ինչ խոսք, ամենաբարդն է կրտսեր դպրոցականի համար: Հատկապես ուսուցման առաջին տարում այն ներառում է գրավոր խոսքի ընկալում և վերարտադրում: Աշակերտից պահանջվում է ընկալել գրքային բառը, խոսքը, արտահայտությունը և փոխարինել այն ինքնուրույն համարժեքներով: Դա բարդ գործընթաց է կրտսեր դպրոցականի համար: Տեքստի բովանդակության ընկալումը միանգամից չի կարող զուգակցվել կարդալու հմտության ձեռքբերման հետ.՝ Այդ է պատճառը, որ ուսուցման առաջին տարում նյութի բովանդակության ընկալումը հետ է մնում ընթերցման հմտությունից:

Ընթերցանությունը երեխային հնարավորություն է ընձեռում հարստացնելու ճանաչողական գործունեության սեփական փորձը, զարգացնելու տրամանաբանական հաղորդակցման, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները:

Ընթերցանության դասերին աշակերտներն ուսուցչի ղեկավարությամբ կարդում են գրական ստեղծագործություններ: Ստեղծագործության գեղագիտական բարոյական արժեքները ընկալելու համար անհրաժեշտ է, որպեսզի դասի ընթացքում նրանք.

1. Խորհեն ընթերցածի շուրջ,
2. Ապրումակցեն հերոսներին,
3. Գնահատեն նրանց տրաքները,
4. Իմաստավորեն նրանց խնդիրները,
5. Զգտեն կատարելու իրենց ընկալած բարոյական նորմերին համապատասխան արարքները:

Այսպիսով՝ կառուցել դաս, որի նպատակն է լինում սովորողների գրական և բարոյական զարգացումը, ընթերցողական կարողությունների և հմտությունների, ինչպես նաև բարոյական պատկերացումների ձևավորումը: Այդ դասի հիմնական նպատակն է՝ զարգացնել աշակերտ – ընթերցողների՝ գեղարվեստական տեքստի լիարժեք ընկալման կարողությունները: Տարրական դասարանների ուսուցիչը

դասավանդում է մի քանի առարկա, որոնցից յուրաքանչյուրն ունի ուսումնասիրման իր տրամաբանությունը և իր հիմնավորումը: Ընթերցանության դասի ընթացքում կատարվող աշխատանքների տրամաբանությունը, մեթոդիկան և ստացվող արդյունքներն այլ են:

1.2 Ընթերցանության դասի մոդելը



Ինչպես տեսնում ենք, դասի բովանդակության հիմքում, որի էությունը կրթությունն ու զարգացումն է, ընկած է սովորողների ինքնուրույն և ստեղծագործական գործունեությունը: Ուսուցիչն աշխատում է ոչ թե վերարտադրողական, այլ փոխներգործում մեթոդներով:

Դիդակտիկ խաղերը, ինչպես պնդում են հոգեբանները, խաղային գործունեության գլուխգործոցներն են: Դրանք միշտ հետաքրքիր են երեխաներին: Այդ ընթացքում երեխաները ցուցաբերել են իմացական և զգացական ակտիվություն: Խաղային գործունեությունը խթանել է նրանց երևակայությունը, մտածողությունը, խոսքը, զգացմունքները:

Աշակերտների մտածողության զարգացման ցուցիչ է ինքնուրույն որոշումներ կայացնելու և հիմնավորելու կարողությունը: Այն բավականին բարդ է, բայց հնարավորություն է ստեղծում արդյունավետորեն լուծելու մի շարք ուսումնական խնդիրներ, ինպիսիք են՝ իմաստավորել ստացած գիտելիքները, դիտարկել այգ գիտելիքները կիրառության մեջ, կատարել վերլուծություն, համադրություն, ապահովել ուսուցման կապն իրական կյանքի հետ:

Այսօր վեց տարեկան երեխան էլ է տիրապետում համակարգչային տարրական գիտելիքների: Նորագույն տեխնոլոգիաները դարձել են մեր կյանքի անբաժան մասը, և անհնար է այլևս մեր առօրյան պատկերացնել առանց դրանց: Այսօր մենք խնդիր ունենք, որ ուսուցիչդ գիտակցաբար քայլի արդիականության հետ, առաջնորդվի ժամանակի պահանջներով: Երեխաներին պետք է ուսուցանել և դաստիարակել առանց հարկադրանքի և ճնշումի, քանի որ բռնությունն առաջ է բերում հիասթափություն, անտարբերություն և ատելություն: Կրթության որակի բարելավումը պահանջում է, որ ուսուցիչն ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական բարձր արժանիքներ: Ավանդական մեթոդներով դասավանդումը չի կարող բավարարել 21-րդ դարի սերնդի աճող հետաքրքրությունները: Սովորողի ուսուցումը պետք է կազմակերպել խաղի, հեքիաթի ձևով՝ սովորեցնել այնպես, ինչպես նա ընկալում է աշխարհը՝ գունագեղ, հստակ ու մատչելի:

Գերմանացի մեծ քնարերգու Գյոթեն ասել է. «Մարդը չի կարող յուրացնել այն, ինչը չի հասկանում»:

Ուսուցչի խնդիրն է՝ հենց նախաայբբենական շրջանից աշակերտի մեջ հետաքրքրություն սերմանել գրքի և ընթերցանության հանդեպ: Գրական ունկնդրման ժամերին հարկավոր է առաջին հերթին ուշադրություն դարձնել լեզվի ճիշտ ու գրագետ գործածությունը:

Ինքնուրույն ընթերցանության ունակությունների ձևավավորումն սկսվում է ուսուցման առաջին օրվանից և իրագործվում է փուլ առ փուլ:

1-ին փուլում անհրաժեշտ է առաջին դասարանցիների մեջ արթնացնել ամեն օր, յուրաքանչյուր ազատ ժամ գիրք, թերթ կարդալու ցանկություն և ձգտում:

Առաջին դասարանում գրական ունկնդրման դասերը պլանավորելիս պետք է հաշվի առնել՝

- ✓ Սովորողների պատրաստվածության մակարդակը
- ✓ Միջավայրի առանձնահատկությունները
- ✓ Երեխաների հետաքրքրությունների շրջանակը

Գրական ունկնդրման դասերին աշակերտները լինում են պասիվ և ակտիվ ունկնդրի դերում: Պասիվ ունկնդրման ժամանակ ակտիվ ընթերցանության ձևավորումը հետաձգվում է: Գրական ունկնդրման դասերը պլանավորելիս պետք է նկատառել աշխատանքի հետևյալ տեսակները.

1. **Խոսքային վարժություններ** դասն սկսել 2-3 րոպե տհալությամբ խոսքային վարժություններով, քանի որ դասամիջոցից հետո աշակերտները դժվարությամբ են անցում կատարում ուսումնական գործընթացին: Խոսքային վարժությունները աշակերտներին ներգրավում են ակտիվ մտավոր աշխատանքի մեջ: Այս վարժությունների համար շատ հարմար են շուտասելուկները, հանելուկները, բանաստեղծությունները:
2. **Ծանոթություն նոր նյութին**: Յուրաքանչյուր գրական ունկնդրման դասի ընթացքում աշակերտները ծանոթանում են նոր ստեղծագործության: Ուսուցիչը նյութը պետք է ներկայացնի հնարավորինս արտահայտիչ:
3. **Գրական ստեղծագործության** ընկալման գործընթացը: 4եց տարեկան երեխայի համար առավել հեշտ է յուրացնել և ընկալել այնպիսի դրվագներ, որոնք իրենց ծանոթ են և իր համար ուշագրավ: Ուսուցչի խնդիրն է աշակերտին ճիշտ և հստակ ուղղորդել դեպի անծանոթ իրավիճակներ, որպեսզի նրանք կարողանան ներթափանցել տվյալ հերոսի ներաշխարհը, ընկալել նրա վարքագծի պատճառները:
4. **Ստեղծագործության բովանդակության ընկալմանը միտված աշխատանքներ:** Պետք է անցկացնել միայն երեխաների սկզբնական ընկալումից հետո:

Աշակերտներն ուսուցչի օգնությամբ կազմում են ստեղծագործությունը վերարտադրելու պլան սխեմա՝ պահպանելով գործողությունների զարգացման ընթացքը:

5. Դասի ամփոփումը կատարվում է տարբեր եղանակներով, օրինակ ստեղծել փոքրիկ գրադարան, կատարել նկարազարդումներ և այլն:

Գլուխ 2

2.1Տարրական դպրոցի ուսուցչին ներկայացվող պահանջները

Ուսուցչին ներկայացվում են մի շարք մանկավարժական պահանջներ: Նախ և առաջ, ուսուցիչը պետք է խորապես տիրապետի այն ուսումնական առարկան, որը ինքն է դասավանդում, տիրապետի գիտական մակարդակով: Առանձին ու երբեք չպետք է բավարարվի ձեռք բերված գիտելիքներով, իր ունեցածով, այլ անընդհատ համալրի իր գիտելիքները, ունենա մասնագիտական խելք և մտածողություն, այլապես նա չի գտնվի այն բարձրության վրա, ուր մշտապես կանգնած է մեծ անուն վաստակած ուսուցիչը:

Պատահական չէ, որ մեր հասարակությունը տարրական դպրոցի ուսուցչին է վստահում իր համար ամենաթանկը՝ մեր փոքրիկ քաղաքացիներին և մեր երկրի ապագան: Ինչպիսին մանկավարժի աշխատանքի արդյունքն է, այդպիսին էլ կլինի մեր հասարակության վաղվա օրը: Ուսուցիչն աշակերտի համար հեղինակություն է, իսկ նրա խոսքը՝ օրենք: Սա էլ ավելի է բարձրացնում ուսուցչի պատասխանատվությունը սովորողների ուսումնա-դաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման հարցում:

Ուսուցչի կարևորագույն գործառույթը սովորողների ուսուցման, դաստիարակության և զարգացման գործընթացները մանկավարժորեն կառավարելն է՝ հաշվի առնելով նրանց հոգեբանական, տարիքային առանձնահատկություններն ու ընդունակությունները, զարգացման մակարդակը, կրթական կարիքները՝ ստեղծելով համապատասխան մանկավարժական պայմաններ:

Ուսուցիչն իր մասնագիտությունը լավ տիրապետելուց բացի պետք է ընդարձակ գիտելիքներ ունենա նաև հարակից առարկաներից: Մանկավարժի մեջ ամենից բարձր գնահատվում է վստահ ե հստակ գիտելիքը և կարողությունը:

Հարակից առարկաների հիմունքների իմացությունը նույպես ուսուցչի համար պարտադիր է, քանի որ սովորողների հայացքների, համոզմունքների, ընդհանրապես աշխարհայացքի ձևավորումը նաև իրականացվում է միջառարկայական, միջգիտական կապերի միջոցով: Ուսուցչի մասնագիտական պատրաստվածությունն ու բազմակողմանի զարգացվածությունը, հատուկ կարևորություն են ներկայացնում 21-րդ դարում: Չէ՞ որ այս դարում, կյանքի բոլոր ոլորտներում կիրամայեն գիտությունն ու տեխնիկան: Ուսումնական տեխնիկական միջոցները թափանցել են բոլոր երկրների, այդ թվում նաև մեր հանրապետության տնտեսություն, գիտությսն, մշակույթի, կրթության ոլորտները դարձել ժամանակի հրամայականը: Մեր ժամանակների ուսուցիչը ոչ միայն պետք է ունենա հարուստ գիտելիքներ, համակողմանի զարգացվածություն և լայն մտահորիզոն, այլև կարողանա իր այդ ունեցածը դարձնել սովորողների սեփականությունը, անընդհատ համալրել նրանց գիտելիքները, կարողություններն ու հմտությունները: Ուսուցիչը դպրոցականների ուսուցումը, դաստիուսրակությունը և զարգացումը ւգետք է բարձրացնի նոր աստիճանի՝ օգտագործելով դրանց տեխնոլոգիաների ընձեռած բոլոր հնարավորությունները:

Ուսուցչին ներկայացվող հաջորդ մանկավարժական պահանջը աշակերտի մեջ ուսուցման տվյալ թեմայի, բաժնի առաջադրված ուսումնադաստիարական խնդիրների լուծման նկատմամբ հետաքրքրությունների ու պահանջմունքների խթանմանն ուղղորդված նրա մշտական գործունեությունն է: Առանց դրա անհնար է զարգացնել սովորողների ճանաչողական ինքնուրույնությունն ու ստեղծագործական ընդունակությունները:

Վերջապես, ուսուցչին ներկայացվում են նաև անձնային պահանջներ: Նա բոլոր առումներով պետք է լինի դաստիարակված, կատարյալ մարդ, կարողանա ճանաչել իր յուրաքանչյուր աշակերտի, հավասարապես կիսի նրանց հաջողություններն ու անհաջողությունները, ուրախությունն ու տխրությունը, անընդհատ զարգացնի իրեն որպես, ուսուցանողի և դաստիարակողի, լինի լավատես և մշտապես նայի սովորողների « հոգու աչքերին» ու միշտ հիշի, որ ինքը ուսուցիչ է, դաստիարակ և ոչ թե բռնապետ:

Ուսուցիչդ պետք է լինի բարեհոգի, ներող, գթասիրտ, կարեկցող, զուսպ, ունենա հոր և մոր սիրտ, լինի լավագույն խորհրդատու, օգնող, սատարող, հասնող, իր մեջ ունենա աշակերտներին դեղի իրեն ձգելու հատկություն և «կախարդող» ուժ ու մշտապես հիշի, որ ինքը ոչ միայն պիտի ունենա այդ որակները, այլև պատրաստակամ լինի դրանք կատարելագործել, հակառակ դեպքում տանուլ կտա նաև ունեցածը:

Ուսուցիչը ստեղծագործական մոտեցում պետք է ունենա իր գործի նկատմամբ: Ինքնակրթության և ինքնադաստիարակության միջոցով պետք է անընդհատ կատարելագործի իր իմացությունն ու անձնական որակները, ուսումնասիրի ուսուցման և դաստիարակության առաջավոր վարձը, հմտորեն կազմակերպի դպրոցականների արտադասարանային և արտադպրոցական դաստիարակչական աշխատանքները:

Ուսուցչի մասնագիտությունը, ինչպես ոչ մի այլ մասնագիտություն,մշտական կատարելագործում է պահանջում: Ուսուցիչն այնքան ժամանակ է ընդունակ նպաստելու ուրիշների կրթությանը, քանի նա դեռ շարունակում է զբաղվել ինքնակրթությամբ: Սովորեցնելով ուրիշներին, ուսուցիչն անընդհատ սովորում է, տիրապետելով նոր գիտելիքների և մեթոդական պատրաստության մակարդակները:

2. 2 Տարրական կրթության մանկավարժության նպատակը, խնդիրները

Անսակարկ է, որ կրթության բոլոր աստիճանների միջև գոյություն ունի սերտ ու տրամաբանական կապ, որը սահուն անցում է ապահովում կրթության մի աստիճանից մյուսին:

Հասարակական կյանքի վերափոխումը, բնականաբար, որոշում է աճող սերնդին դաստիարակելու առաջնահերթություններն ու ըստ քաղաքական, տնտեսական, սոցիալ- մշակութային տեղաշարժերի: Դաստիարակությունը, ինչ խոսք, անհրաժեշտ է անձի տարիքային բոլոր կենսափուլերում, սակայն այն առավել կարևոր է կրտսեր դպրոցական տարիքում: Այս տարիքի երեխաների կրթության, դաստիարակության հարցերով էլ զբաղվում է տարրական կրթության մանկավարժությունը:

Տարրական կրթության մանկավարժությունը տարիքային մանկավարժության մի ճյուղ է, որի ուսումնասիրության առարկան տարրական դպրոցի

կրթադաստիարակչական գործընթացի օրինաչափությունները, սկզբունքները, խնդիրները, մեթոդները, տեխնոլոգիաները, միջոցներն ու ձևերն են:

Տարրական կրթության խնդիրներն են.

Կրտսեր դպրոցականի անձի ներդաշնակ զարգացումը ընդհանուր ունակությունների և մտահորիզոնի, արժեքային կողմնորոշումների ձևավորումը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր աշակերտի տարիքային առանձնահատկությունները, անհատական հնարավորություններն ու կարիքները:

Ուսումնական գործունեություն ծավալելու տարրական մշակույթի զարգացումը ուսումնական գործունեության համար անհրաժեշտ հիմնական բաղադրիչների տիրապետում՝ ուսումնական խնդրի ընկալմանը համարժեք գործողությունների կատարման, ստուգման, ինքնաստուգման, գնահատման և ինքնագնատահման կարողությունների դրսևորում:

Ինքնակրթության և ինքնագնահատման կարողությունների ձևավորում, աշակերտների ճանաչողական հետաքրքրությունների ձնավորում, աշակերտների ճանաչողական հետաքրքրությունների ընդլայնում և որոշակի մակարդակի ապահովում:

- ✓ Տարրական կրթության հիմնական նպատակը սովորողի՝
- ✓ Մտավոր, հոգեկան և ֆիզիկական կարողությունների զարգացումն է
- ✓ Լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության, աշխարհայացքի պատկերացումների հիմքերի ստեղծումն է,
- ✓ Աշխատանքային տարրական կարողությունների ձևավորումն է,
- ✓ Բարեկիրթ վարքի և կայուն արժեհամակարգի հիմքերի ձևավորումը ,
- ✓ Բարոյահոգեբանական, հայրենասիրական, գեղագիտական, էկոլոգիական և ֆիզիկական դաստիարակությունն է և առողջ ապրելակերպի հիմքերի արմատավորումը,
- ✓ Միջին դպրոցում կրթությունը շարունակելու համար անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների մակարդակի և կրթության շարունակականության ապահովումը:

Միջնակարգ կրթության պետական չափորոշչում տարրական դպրոցի համար սահմանվում են սովորողին ներկայացվող ընդհանրական և որակական պահանջներ,

որոնց վերջնարդյունքը սովորողի անձի զարգացումն է, մաթեմատիկակուսն, սուեղծուսգործական մտածողության, գիտական աշխարհայացքի և արժեհամակարգի ձևավորումը:

ԵԶՐԱԿՈՒԹՅՈՒՆ

«Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու գործընթացում» հետազոտական աշխատանքը ուսումնասիրելիս հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

Հայաստանում կրթությունն ունի բազմադարյան պատմություն և ավանդույթներ: Իր սկզբնավորման օրվանից հայ դպրոցը եղել է ժողովրդի քաղաքական և ազգայինգոյատևման հենարանն ու առաջընթացի գրավականը: Այսօր պետական և ազգային կարևորագույն խնդիր է համարվում կրթության համակարգի պահպանումը, զարգացումը և միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը: 21-րդ դարում գիտության սրընթաց զարգացումը սովորողից պահանջում է ինտելեկտուալզարգացման նոր աստիճան՝ ինչպես կողմնորոշվել գիտելիքների «հեղափոխության» անծայրածիր ինֆորմացիայի դաշտում:

Դարիվեր դիդակտիկայի մշտական պահանջն է եղել սովորողների մոտ ձևավորել քննադատական մտածողության, հմտություններ, կարողություններ:

Ուսումնասիրության ընթացքում բացահայտել եմ կրտսեր դպրոցականի քննադատական մտածողությունը, ինքնուրույնությունը, նրան պետք է բացատրել թե ուսումնական նյութից ինչը պետք է յուրացնել, իմաստավորել, որպեսզի այդ գիտելիքների օգնությամբ կարողանա ձեռք բերել նորերը՝ նոր գիտելիքների տիրապետելու պահանջմունք ձևավորել կրտսեր դպրոցականի ուսումնական գործունեությունը նպատակաուղղված է: Առաջին հերթին աշակերտը պետք է տիրապետի գրելու, կարդալու հաշվելու ընթերցելու հմտություններին, ձեռք բերի գիտելիքներ մայրենի լեզվից և երկրորդ ընդլայնվում է զարգանում է քննադատական մտածողությունները և 3-րդ տեղի է ունենում մտավոր զարգացում և ձևավորվում է պատասխանատվություն ուսման նկատմամբ և հասարակակն դրդապատճառներ մարդու մեջ իբնե, իծնե դրված է որոնելու, փնտրելու գտնելու արվեստը: Երեխան գրելու ընթացքում հայտնվում է մի իրավիճակում, երբ պետք է որոշի ոչ թե «ինչ անել», այլ «ինչպես անել»:Ես քայլ առ քայլ աշակերտի մոտ առաջ եմ բերում անմիջական հուզական վիճակ: Ինձ համար նպատակ է դառնում պահպանել երեխաների զարմանքի և հետաքրքրասիրության բնածին հատկությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Վ.Ա. Սուխոմլինսկի, «Սիրտս նվիրում եմ երեխաներին», Երևան, 1977թ.
2. Գ. Ի Շչուկինա,Մանկավարժություն, Երևան, 1969թ.
3. Կ. Դ. Ուշինսկի, Մանկավարժական ընտիր երկեր, Երևան, 1981թ.
4. Աիդա Թոփուզյան, Սովորողների անհատականության բացահայտումը որպես ուսուցիչ ֊ աշակերտ հարաբերությունների համայնացման հիմք, մանկ. Միտք, 2005թ. էջ 30
5. Պետրովսկի Ա. 4., Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Երևան, լույս 1986թ.
6. Ա. Ա. Բալյան, Դպրոցականների համոզմունքների ձևավորումը
7. Լուկ Ա. Ն. «Սովորեցնել մտածել», Երևան, լույս 1977 թ.